

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանը հանդիսանում է նախկին Սովետական Միության մեջ մտնող հնագույն պետություններից մեկը: Մոլոխադերն այդ պետության մեջ նույնպես ունեն հին պատմություն և գոյություն են ունեցել շատ վաղ՝ մինչ ներկայիս Հայաստանի ինքնիշխանության ձեռքբերումը:

Դիտարկումները Հայկական խաղային բիզնեսի մասին կարելի է սկսել այն պահից, երբ Հայաստանը ընտրեց կոմունիստական զարգացման ուղիին: Հայկական ՍՍՀ-ն ձևավորվել է 1920 թվականի նոյեմբերի 29-ին:

1921 թվականի գարնանը Սովետական երկրների տարածքում սկսում է Նոր Էկոնոմիական Քաղաքականությունը և խաղային բիզնեսը, որպես իրավական, սկսում է ձևավորվել Հայկական ՍՍՀ-ում:

1922 թվականի մարտի 12-ին Հայաստանը դառնում է Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱՍՖՍՀ) մաս, իսկ 1922 թվականի դեկտեմբերի 30-ին ԱՍՖՍՀ կազմով մտնում է ՍՍՀՄ կազմի մեջ: Խաղային բիզնեսը նրա տարածքում գործում է ընդհուպ մինչև 1928 թվականը, երբ խաղային գործունեությունը Սովետական Միությունում երկար տարիներ արգելվում է:

1936 թվականին Հայաստանը, որպես Միութենական Հանրապետություն մտնում է ՍՍՀՄ կազմ: Երկար տարիներ միակ մոլախաղը երկրում հանդիսանում էր Երևանյան ձիարշավարանում գործող տոտալիզատորը, ինչպես նաև բազմատեսակ սովետական վիճակախաղերը:

Հայաստանի, որպես ինքնիշխան և ժողովրդավարական Հանրապետության, պատմությունը սկսում է 1990 թվականի օգոստոսի 23-ից, երբ Հայկական ՍՍՀ վերանվանվում է “Հայաստանի

Հանրապետություն”։ Մեկ տարվա ընթացքում Հայաստանը շարունակում է մնալ ՄՍՀՄ կազմում, որից հետո 1991 թվականի սեպտեմբերի վերջին դառնում է ինքնիշխան Հանրապետություն։

Հայկական խաղային բիզնեսի պատմությունը և դրա իրավական կարգավորումը սկսում է հենց նույն ժամանակաշրջանում՝ 1990 թվականի վերջերին երկրում բացվում է առաջին խաղատունը։ Ով՛ կարող էր մտածել այն ժամանակ, որ 2002 թվականի վերջին որևէ խոշոր խաղատուն չի մնա ոչ Հայաստանի մայրաքաղաքում, ոչ էլ մյուս խոշոր քաղաքներում, իսկ 21 դարի խաղային բիզնեսի տիպային պատկերը կդառնա “բնանկարը” պատկերված ճանապարհով և “Եվրոպա” , “Նացիոնալ”, “Կլեոպատրա”, “Սթերլինգ”, “Գլորիա”, “Միրած”, “Բալու”, “Կակադու”, “Նեվադա”, “Ֆլամինգո”, “Բլու Դայմոնդ” անվանումներով, ոչ բարձր շինություններով։

Խաղային բիզնեսի առաջին ճանաչումը, դրա իրավական կարգավորման նպատակով տեղի է ունենում 1991 թվականի գարնանը։

1991 թվականի մարտի 5-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ կողմից ընդունվում է թիվ 161 որոշումը, որի համաձայն խաղային գործունեությունը առաջին անգամ սկսում է լիցենզավորվել։ Լիցենզավորող մարմինը դառնում է Ֆինանսների նախարարությունը։

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվում է համաժողովրդական հանրաքվե ՄՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ։ Երկու օրից Գերագույն խորհուրդը հաստատում է հանրաքվեի արդյունքները և հռչակում է Հայաստանի Հանրապետության անկախությունը։

Խաղային բիզնեսը նոր երկրում շարունակում է զարգանալ։

Արդեն 1992 թվականի հունվարի 18-ին Հայաստանում ընդունվում է “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքը, որում առաջին անգամ որոշվում են

խաղային բիզնեսի համար հարկման հատուկ չափորոշիչները: Այսպես՝ շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպումից ու անցկացումից (այդ թվում խաղատանն անցկացվող) ստացված եկամուտների դիմաց շահութահարկը վճարվում է 70 տոկոս դրույքաչափով: Այդ պահից սկսած երկրում գործում են մի քանի խաղասրահներ՝ խաղային սարքավորումներով, և փոքր խաղատներ, որտեղ տեղադրված են 3-4 խաղային սեղաններ՝ պտուտակախաղ և բլեք ջեք խաղերի անցկացման համար:

1993 թվականին գալիս է իրական խաղային բիզնեսի ժամանակաշրջանը՝ Հանրապետության մայրաքաղաք Երևանում բացվում է այդ ժամանակաշրջանի ամենախոշոր “Կազինո Նացիոնալ” խաղատունը:

Երկար տարիներ խաղային բիզնեսի օրենսդրական կարգավորման մեջ ոչինչ տեղի չի ունենում:

1998 թվականին կարգավորվում է խաղային գործունեության հարկման հարցը: Հայաստանը ինչպես Ռուսաստանի Դաշնությունը անցնում է կատարում շահութահարկից հաստատագրված վճարներով խաղային սարքավորումների հարկմանը:



Մինչև 1998 թվականը շահութահարկի դրույքաչափերը շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների համար կազմում էին նույն 70 տոկոսը ինչը և հանդիսանում էր գլխավոր խոչընդոտը խաղային բիզնեսով զբաղվելու ցանկություն ունեցողների համար:

1998 թվականի հուլիսի 7-ին Հանրապետությունում ընդունվում է “Հաստատագրված վճարների մասին” ՀՀ օրենքը¹, որի առանձին գլուխը վերաբերում է խաղատների կազմակերպման համար հաստատագրված վճարներին:

Օրենքի համաձայն խաղատուն է համարվում այն խաղասրահը, որի ներքին կամ արտաքին կողմից ցուցադրվում է “խաղատուն” կամ “կազինո” բառը կամ դրանց օգտագործմամբ բառակապակցությունները՝ հայերեն կամ օտար լեզուներով, կամ որտեղ շահագործվում է թեկուզ մեկ խաղասեղան կամ քսանից ավելի խաղային ավտոմատ, կամ երկուսն իրար հետ՝ անկախ դրանցից յուրաքանչյուրի քանակից:

Խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի¹ ամսական չափը որոշում է ելակետային սովյալի և համապատասխան ուղղիչ գործակցի արտադրյալի 1 500 000-

ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ: Ընդ որում խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է համարվում տեղադրված խաղասեղանների քանակը:

Հաստատագրված վճարի հաշվարկման համար, խաղատների գտնվելու վայրի հետ կապված, ուղղիչ գործակիցները, որոնք սահմանվում են Կառավարության կողմից, հետևյալն են՝ Երևան քաղաքի համար՝ 0,7-ից 1,0¹, Երևան քաղաքից դուրս՝ 0.5:

Խաղային ավտոմատների հարկման համակարգը նույնանման է: Հարկման նպատակով, դրամական շահումով խաղային ավտոմատներ են համարվում ծրագրավորված ավտոմատացված խաղերի անցկացման համար սարքերը (այդ թվում՝ լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակագրության համար ծրագրավորված այլ սարքեր), որոնց խաղերի անցկացման ժամանակ, շահողը որոշում է ավտոմատներում պարունակվող հատուկ ծրագրի միջոցով՝ խաղերի մասնակցի անմիջական կամ ոչ անմիջական մասնակցությամբ:

Հաստատագրված վճարի ամսական չափը որոշվում է՝

- լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքերի համար՝ համապատասխան ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 10 000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ.
- այլ ավտոմատների համար՝ համապատասխան ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 50 000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ

Դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի ելակետային տվյալներ են՝ լոտոտրոն,

¹ Համաձայն 06.07.2000 թվականի “Եկամտահարկի և հաստատագրված վճարների մասին” ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” թիվ 78 օրենքի ուղղիչ գործակիցը կապված խաղատների տեղակայման հետ հաստատագրված վճարի չափը հաշվարկելու համար Երևան քաղաքի համար կազմում է 2.0.

բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքերի համար՝ խաղասրահի մակերեսը՝ քառակուսի մետրերով, այլ ավտոմատների համար՝ ավտոմատների քանակը:

Հաստատագրված վճարի հաշվարկման համար, դրամական շահումով խաղային ավտոմատների գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցներն են՝

- Երևան քաղաքի համար 2.0.
- Հանրապետության մարզկենտրոն, ինչպես նաև Աբովյան և Վաղարշապատ քաղաքների համար 0.9.
- այլ վայրերի համար 0.8:

Ընդ որում 1999 թվականի ապրիլ ամսից սկսած յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար հաստատագրված վճարի ամսական չափը, համաձայն օրենքի, ավելանում է սահմանային չափերի նկատմամբ կիրառվող, նախորդ տարվա ընթացքում արձանագրված սպառողական գների փաստացի աճի ինդեքսն համապատասխան, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է մինչև ընթացիկ տարվա ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից: Օրենքն ուժի մեջ է մտել 1998 թվականի օգոստոսի 1-ից:

1998 հոկտեմբերի 28-ին պետական հսկողության պատշաճ ապահովման նպատակով ՀՀ Կառավարությունն ընդունում է թիվ 657 “ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ” որոշումը, որով սահմանում է շահումով խաղեր և խաղատներ կազմակերպելու գործունեության կարգավորման, լիցենզավորման և վերահսկողության կարգը: Նշված իրավական ակտով կարգավորվում են շահումով խաղեր և խաղատներ կազմակերպելու, գործունեության, լիցենզավորման գործընթացից ծագող իրավահարաբերությունները, ինչպես նաև պետական վերահսկողությունը:



Նշված որոշման համաձայն շահումով խաղեր և խաղատներ կազմակերպելու լիցենզավորումն իրականացնում է լիազոր մարմինը, որը Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 1991 թվականի մարտի 5-ի N 161 որոշմամբ հաստատված շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեությունը լիցենզավորող պետական կառավարման մարմինն է:

Նշված որոշման մեջ պարզաբանվում են խաղային գործունեության կազմակերպման համար պարտադիր պայմանները: Այսպես խաղատունը պետք է ունենա առնվազն 100 քառ. մետր մակերես, այն չպետք է գտնվի նախադպրոցական, միջնակարգ, միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատության տարածքում: Դրանից բացի, այն պետք է ուղիղ գծով առնվազն 200 մետր հեռու լինի որևէ նախադպրոցական, միջնակարգ, միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատության տարածքից: Այնուամենայնիվ այս բոլոր սահմանափակումներից անկախ խաղատուն կարող է կազմակերպվել հյուրանոցային համալիրներում, մոթելներում:

Խաղատան կազմակերպիչը պարտավոր է նաև խաղացողներին համար խաղասրահում ապահովել բրոշյուրներով կամ գրավոր այլ ձևով տրված նախազգուշացումներով խաղատուն հաճախելու բացասական հետևանքների մասին:

Շահումով խաղերի և խաղատների կազմակերպման նկատմամբ պահանջները շարունակվում են նոր պահանջներով: Այն է լիցենզիան ստանալու պահին խաղատան կազմակերպչի կանոնադրական հիմնադրամի փաստացի համալրված մասը պետք է կազմի առնվազն 10 մլն հայկական դրամ, իսկ շահումով խաղի կազմակերպչին՝ առնվազն 1 մլն հայկական դրամ: Դրանից բացի շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչները համաձայն “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքի տարեկան վճարում են պետական տուրք 25 միլիոն դրամի չափով:

Բոլոր խաղատներին, որոնք չեն համապատասխանում նշված պայմաններին տրվում է մեկ տարի իրենց գործունեությունը նոր չափանիշներին համապատասխանացնելու համար:

Երկար տարիներ որևէ փոփոխություն տեղի չի ունենում: Եվ ասիա 2000 թվականի հուլիսի 6-ին թիվ 78 օրենքով շահումով խաղերի հարկման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող փոփոխություններ են կատարվում “Հաստատագրված վճարների մասին” ՀՀ օրենքում: Համաձայն նոր նորմերի ամսեկան հաստատագրված վճարը որոշվում էլակետային տվյալների 20 տոկոսով: Վիճակախաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալ է համարվում ամսվա ընթացքում անցկացված բոլոր խաղարկությունների համար իրացված վիճակախաղերի տոմսերի ընդհանուր արժեքը:

Քիչ ուշ օրենքի կիրառումն ապահովելու նպատակով Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ընդունում է երկու հրաման որոնք վերաբերում են մոլախաղերին, և որոնք կարող են անցկացվել

խաղատանը (1998 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 381 և 1999 թվականի մարտի 23 թիվ 108): Նշված իրավական ակտերում առաջին անգամ տրվում են ամերիկյան պտուտակախաղ, բլեք ջեք և պոկեր խաղերի նկարագրությունն ու խաղի անցկացման կանոնները:

Շուրջ յոթ տարի առաջին խաղերի կանոնների հաստատման պահից խաղային բիզնեսը զարգանում է որակապես և քանակապես: Չնայած այս հանգամանքը գոհացնում է ոչ բոլորին: Արդյունքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների և օրենսդիր իշխանության միջև տարաձայնությունները հանգեցնում են արդյունքի՝ երկրում առաջին ճյուղային օրենքի ընդունման, որը կարգավորում է խաղային գործունեությունը: Օրենքի հիմնական նորամուծությունն այն էր, որ խաղատները տեղափոխվեցին բնակելի տարածքներից դուրս - 2000 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը ստորագրված է թիվ 102 “Շահումով խաղերի և խաղատների մասին” ՀՀ օրենքով:

Օրենքը կարգավորում է շահումով խաղերի, խաղատների գործունեության կազմակերպման և կարգավորման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է դրանց նկատմամբ պետական վերահսկողությունը: Հայաստանի Հանրապետությունում շահումով խաղերի, խաղատների գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները: Խաղային գործունեությունն իրականացվում է լիազոր մարմնի կողմից տրված համապատասխան լիցենզիայի հիման վրա՝ լիազոր մարմին է հանդիսանում ֆինանսների նախարարությունը: Օրենքում նախատեսված են լիցենզիաների երկու տեսակ՝ խաղատան բացման լիցենզիա և խաղասրահի: Լիցենզիան տրվում է անժամկետ: Լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե հայտին կից փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքների և

իրավական այլ ակտերի պահանջներին, կամ դրանցում ներկայացված են կեղծ տեղեկություններ, լիցենզիայի հայտատուն ունի հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ:



Օրենքով նախատեսվում են Հանրապետության տարածքում շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների աշխատանքային առանձնահատկությունները: Այսպես օրինակ խաղային ավտոմատների նվազագույն քանակը խաղատանը (և կազինո և խաղասրահ) չի կարող 20-ից պակաս լինել: Խաղատան կազմակերպիչներն իրենց անվանման կամ ցուցանակների մեջ կարող են օգտագործել «խաղատուն», «խաղասրահ» և «շահումով խաղեր» բառերը, դրանց ածանցյալները կամ թարգմանությունները միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Օրենքով սահմանվում է նաև խաղային ավտոմատի շահագործումից ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափը, որը սահմանվում է ՀՀ Կառավարության կողմից:²

Օրենքի համաձայն շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչը պարտավոր է իր գործունեությունը ծավալել միայն լիցենզիայում նշված հասցեով: Դրանից բացի նա պետք է ապահովի խաղասրահի դրսից դեպի ներս անտեսանելիությունը. ապահովի խաղասրահի տարածքի պաշտպանությունը պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերով, խաղացողի առաջին իսկ պահանջի դեպքում տրամադրի շահումը, ապահովի խաղասրահում խաղանիշերի (ժետոնների) փոխանակումը միայն կանխիկ հայկական դրամով, բանկային քարտով կամ բանկային պրակտիկայում ընդունված այլ վճարային փաստաթղթերով: Խաղասրահում կազմակերպվող խաղերի կանոնները փակցնում է խաղասրահում, տեսանելի տեղում: Շահումով խաղերը կազմակերպվում և անցկացվում են լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան:

Բավականին խիստ սահմանափակումներ են ներկայացվում օրենքով խաղատների գտնվելու վայրի նկատմամբ: Բոլոր խաղատները կամ խաղասրահները կարող են կազմակերպվել քաղաքային համայնքների վարչական սահմաններից դուրս ոչ պակաս քան 50 կմ ուղիղ գծով Երևանի վարչական սահմանից և ոչ պակաս քան 10 կմ ուղիղ գծով այլ շրջանային կենտրոնների վարչական սահմաններից:

Հաճախորդների նվազագույն տարիքը պետք է լինի 21 տարեկան:

Օրենքի խախտումների համար սահմանվում են տուգանքներ, որոնց չափը կազմում է 100 000-ից 300 000 դրամ:

Օրենքով սահմանվում են նաև բավականին բարենպաստ պայմաններ, ասենք օրինակ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը տրված լիցենզիաները պահպանում են իրենց ուժը մինչև դրանցում սահմանված ժամկետի ավարտը՝ օրենքի ուժի մեջ մտնելու պահից ոչ ավել քան մեկ տարվա ընթացքում գործունեությունը օրենքին համապատասխանեցնելու պայմանով: Խաղային

կազմակերպությունների քաղաքից դուրս տեղափոխելու համար տրվում է երկու տարի:

Բացի այդ 2000 թվականին ընդունվում է առաջին օրենքը որը կարգավորում է վիճակախաղերի կազմակերպման գործունեությունը: ²

Օրենքի ընդունումից հետո կատարվում են խաղատներում կազմակերպվող շահումով խաղերի կանոնների ուղղումներ:

2000 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ընդունում է թիվ 302 որոշումը, որով Հայաստանում կարելի է անցկացնել երեք խաղ՝ ամերիկյան պտուտակախաղ, բլեք ջեկ, պոկեր: Նախկինում գործող բոլոր որոշումները այդ պահից դադարում են գործել:

Օրինական ուժի մեջ մտած օրենքի կիրառումն ապահովելու նպատակով ընդունված մի շարք նորմատիվ իրավական ակտերը զգալիորեն փոխում են երկրում խաղային բիզնեսի պատկերը:

2006 թվականի մարտի մեկի դրությամբ երկրում փակվում են 6 խաղատներ: Մնում ընդամենը 9 խաղատուն, դրանց թվում “XX դար”, “Նեվադա”, “Գոլդն Գեյթ”:

2001 թվականի մարտի 05-ին ՀՀ Կառավարության թիվ 657 որոշումը կորցնում է իր ուժը և լիցենզավորման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով 2001 թվականի մարտի 30-ին ընդունվում է “Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտնում 2001 թվականի օգոստոսի 8-ին: Ձեռնարկատիրական գործունեության մի տեսակ, որով զբաղվելու համար անհրաժեշտ է լիցենզիայի առկայությունը դառնում է վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների կազմակերպումը: Օրենքի համաձայն լիցենզիան տրվում է իրացասու պետական մարմինների կողմից: Խաղային գործունեության լիցենզավորման համար պատասխանատու է նույն ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:



Վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների կազմակերպման լիցենզիան տրվում է բարդ ընթացակարգով⁶, և լիցենզիա տրամադրող մարմինն իրավասու է իրավաբանական անձից պահանջել ներկայացնելու հաշվետվություններ և տեղեկություններ նրա գործունեության վերաբերյալ:

2001 թվականի դեկտեմբերի 26-ին

“Լիցենզավորման մասին” ՀՀ

օրենքի հիման վրա ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի թիվ 517 հրամանով հաստատում է “ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ” Համաձայն 2001 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 517 որոշման հաստատվում է լիցենզավորման հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակիցներ: Նախարարի տեղակալներից մեկը ի պաշտոնե այդ հանձնաժողովի նախագահն է:

Խաղային բիզնեսը, նոր կանոններին վերաբերվում է առանց ավելորդ ուշադրության և շարունակում է նվազել: 2002 թվականի ապրիլի դրությամբ երկրում մնում է միայն 4 խաղատուն և 48 խաղասրահներ: Երկրում աշխատում են 717 խաղային ավտոմատներ և միայն 10 խաղային սեղաններ:

2003 թվականի սկզբին Հայաստանի խաղային բիզնեսը վերջնականապես դուրս է բերվում մայրաքաղաքից և բոլոր խոշոր

քացաքներից: 2 տարվա ընթացքում մնացած կազմակերպությունները հուսով են, որ օրենքն այնուամենայնիվ կմեղմացվի:

Սակայն այն տեղի չի ունենում և արդյունքում Երևանում փակվում են 49 խաղասրահներ:

Չնայած այս ամենին խաղային բիզնեսը Հայաստանում չի մահանում: Երբ պարզ է դառնում, որ օրենքի մեղմացում տեղի չի ունենալու ֆինանսների նախարարություն սկսում են ուղղվել բազմաթիվ դիմումներ ձեռնարկատերերից՝ լիցենզիաները քաղաքներից դուրս գործունեություն իրականացնելու համար վերաձևակերպելու խնդրանքով:

Արդյունքում 2003 թվականի սկզբին Հայաստանում արդեն աշխատում են 5 խաղատուն և 45 խաղասրահներ:

2003 թվականի աշունը հայկական խաղային բիզնեսի համար դառնում է օրենսդրորեն ամենաառատ ժամանակաշրջանը: Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը վերանայում է միաժամանակ մի քանի օրենսդրական նախագծեր, որտեղ արժարժվում է խաղային գործունեությունը: Նախագծերից մեկը վերաբերում է գործարարներին և իշխանությանը ոչ ձեռնտու “Շահումով խաղերի և խաղատների մասին” օրենքին:

2003 թվականի դեկտեմբերի 13-ին “Շահումով խաղերի և խաղատների մասին” օրենսդրական նախաձեռնությունը դառնում է օրենք⁷: 2004 թվականի հունվարի 7-ին այն ստորագրվում է ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից, և 2004 թվականի հունվարի 7-ին մտնում օրինական ուժի մեջ:

Օրենքի բովանդակությունը քիչ է տարբերվում իր նախորդից, չնայած պարունակում է մի շարք հիմնարար դրույթներ, որոնց առիթով խիստ անհրաժեշտ էր նման օրենքի ընդունումը, հակառակ դեպքում խաղային գործունեությունը Հայաստանում ի սպառ կվերանար:

Այսպես փոփոխվեց օրենքի առաջին հոդվածը, որը սահմանում է բոլոր շահումով խաղերը, որոնք կարող են անցկացվել Հայաստանի Հանրապետությունում: Այդ պահից սկսած օրենքի գործողությունը չի տարածվում հեռահաղորդակցության որևէ կապի միջոցով շահումով խաղերի կազմակերպման գործունեության վրա: Շախմատ, շաշկի, նարդի, տիր, բիլիարդ և նմանատիպ սպորտային բնույթի խաղերը ևս շահումով խաղ չեն հանդիսանում: Առաջին անգամ տարանջատում է դրվում խաղատան կազմակերպման և խաղասրահի կազմակերպման համար տրվող լիցենզիաների միջև: Շահումով խաղերի կազմակերպման համար տրված լիցենզիայի համաձայն խաղատան կազմակերպում չի կարող իրականացվել: Խաղատան լիցենզիան իրավասություն է տալիս նույն խաղասրահում կազմակերպելու ցանկացած շահումով խաղ: Ինչպես և առաջ իրավաբանական անձինք իրենց անվանման կամ ցուցանակների մեջ կարող են օգտագործել «խաղատուն», «խաղասրահ» և «շահումով խաղեր» բառերը, դրանց ածանցյալները կամ թարգմանությունները միայն համապատասխան թույլտվության (լիցենզիայի) առկայության դեպքում: Ընդ որում շահումով խաղի կազմակերպիչներն իրենց անվանման կամ ցուցանակների մեջ կարող են օգտագործել «խաղասրահ» և «շահումով խաղեր» բառերը, դրանց ածանցյալները կամ թարգմանությունները և չեն կարող օգտագործել «խաղատուն» բառը, դրա ածանցյալները կամ թարգմանությունները:

Եվս մեկ նորամուծություն է հանդիսանում խաղային ավտոմատի շահագործումից ստացված հասույթի մեջ շահումների ծրագրավորված ընդհանուր մեծության նվազագույն չափը, որը կազմում է 86 տոկոս:

Գլխավոր փոփոխությունը, որի համար և ընդունվում էր նոր օրենքը վերաբերում էր խաղատների տեղակայմանը: Իշխանությունները և գործարարները հանգեցին այն համոզման, որ 50 կմ հեռավորությունը շատ է օրինականորեն աշխատելու համար: Եթե առաջ սահմանված էր

Երևանի սահմանային գծից 50 կմ, իսկ այլ խոշոր քաղաքների սահմանային գծից 30 կմ հեռավորությունները, ապա այժմ օրենքում ուղղակիորեն նշված է, որ խաղատուն կամ շահումով խաղ կարող է կազմակերպվել քաղաքային համայնքների վարչական սահմաններից դուրս:

Ավելանում են նաև տուգանքի սանկցիաները: Այդ պահից սկսած տուգանքի չափը կազմում է 200 000-ից 500 000 դրամ, կապված իրավախախտման բնույթից: Նույն իրավախախտման կրկնակիությունը խստացնում է տուգանքի չափը՝ կազմելով 1 000 000 դրամ:

Դրանից բացի 2003 թվականի դեկտեմբերի 17-ին նոր փոփոխություններ և լրացումներ են կատարվում “Գովազդի մասին” ՀՀ օրենքում ⁸: 2004 թվականի հունվարի 24-ից վիճակախաղի դրամական շահումների գովազդումը զանգվածային տեղեկատվության միջոցներով արգելվում է: Դրանից բացի յուրաքանչյուր Հեռուստահաղորդակցության ալիքով հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի, շահումով խաղի, խաղատան կազմակերպչի գովազդի ընդհանուր տևողությունը, այդ թվում՝ գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները նրանց մասին, 24 ժամվա ընթացքում չի կարող գերազանցել 9 րոպեն, իսկ մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի և չի կարող գերազանցել 60 վայրկյանը: Վիճակախաղի, շահումով խաղի կամ խաղատան գովազդի ժամանակ արգելվում է դրամական միջոցների ցուցադրումը: Արգելվում է վիճակախաղի, շահումով խաղի կամ խաղատան գովազդումը Հանրային հեռուստատեսությամբ, բացառությամբ հովանավորության դեպքերի: Արգելվում է վիճակախաղի, շահումով խաղի կամ խաղատան գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո:

2003 թվականի դեկտեմբերի 29-ին Հանրապետությունում ընդունվում է “Հաստատագրված վճարների մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” թիվ 51 օրենքը: Որի համաձայն խաղային բիզնեսի օբյեկտների հարկային դրույքաչափերը ավելանում են: 2004 թվականի հունվարի 0-1-ից մինչ օրս դրանք կազմում են

Անվանումը	Հարկի դրույքաչափը, Ե ԱԴ ²
Խաղատուն (կազմինո)	Ելակետային տվյալների 2.500.000-ապատիկ չափը
Լոտոտրոն, բինգո և այլ մեխանիկական խաղարկության ծրագրավորված սարքեր	Ելակետային տվյալների 15.000- ապատիկ չափը
Այլ խաղային ավտոմատներ	Ելակետային տվյալների 75.000- ապատիկ չափը


Ընդ որում խաղատան կազմակերպման համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալը հանդիսանում է տեղադրված խաղասեղանների քանակը: Լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության և ծրագրավորված այլ սարքերի համար՝ խաղասրահի մակերեսը՝ քառակուսի մետրերով, այլ տեղադրված (առկա) ավտոմատների համար՝ ավտոմատների քանակը: Որևէ արտոնություն և ուղղիչ գործակիցներ, ինչպես կար անցյալում այժմ գոյություն չունի:

Բիզնեսը աստիճանաբար կարգավորվում է: 2003 թվականի վերջում երկրում արդեն աշխատում են 15 խաղատուն, որոնց թվում “Գլորիա”, “Կլեոպատրա”, “Նացիոնալ”, “Բալու”, “Սթերլինգ”, “Գոլդն Գեյթ”: Նոր կազմակերպությունները գտնվում են Երևանի սահմանից ձեռքի հեռավորության վրա: Ճիշտ է խաղասրահների քանակակը պակասում է

² ԱԴ – խաղատան կազմակերպման գործունեության իրականացման համար հաստատագրված վճարի ամսեկան դրույքաչափը դրամական արտահայտությամբ:

45-ից 30-ի: 2003 թվականի վերջին խաղային բիզնեսն ապահովում է Հայաստանի բյուջե ներմուծվող գումարների 1 տոկոսը:

2004 թվականի աշնանը քննարկվում են մի շարք հանգստյան գոտիներում՝ Դիլիջան, Ծախկաձոր, Ջերմուկ քաղաքներում խաղատների կազմակերպման թույլտվության հարցը: Արդյունքում սկզբից պատգամավորներն առաջարկում են համալրել քաղաքները Վանաձորով և Գյումրիով հետո էլ ընդհանրապես հրաժարվում են գործող օրենսդրության մեջ որևէ փոփոխություն կատարելուց:



2004 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Ազգային Ժողովը ընդունում է “ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ” ՀՀ օրենքը, որի համաձայն 2005 թվականի հունվարի 1-ից բոլոր խաղային կազմակերպություններում հսկիչ դրամարկղայինմեքենաների ներդրումը պարտադիր է:

2005 թվականի դրությամբ երկրում խաղային կազմակերպությունների թիվը աճում է: Հայաստանում գործում է 16 խաղատուն և 45 խասասրահ: Շատանում են վճարումները պետական բյուջե: 2005 թվականին բյուջե է վճարվում 595 մլն. դրամ գումար: 2006

թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գործում է 18 խաղատուն և 51 խաղասրահ: Խաղային բիզնեսից բյուջե է վճարվում մոտ 700 մլն. դրամ գումար:

2007 թվականին խաղային բիզնեսի պատկերը փոքր ինչ մթագնում է: 2007 թվականի հուլիսի 1-ի դրությամբ երկրում գործում են 15 խաղատուն և 56 խասասրահ: Ամենաճանաչված խաղատների թվում են “Սենատոր”, “Միլիոն”, “Կլեոպատրա”, “Նացիոնալ”, “Կակադու”, “Ջոյ”, “Փարավոն” և “Երևան”: Դրանց մեծ մասը տեղակայված են Երևան Էջմիածին մայրուղու վրա Զվարթնոց օդանավակայանից մինչև Հանրապետության մայրաքաղաք՝ Երևան:

2008 թվականի ապրիլի 16-ին երկրում “Կլեոպատրա” խաղատան տեղում Երևան Սևան մայրուղու 10 կիլոմետրի վրա բացվում է նոր “Շանգրի Լա Երևան” խաղատունը, որը դառնում է Հայաստանի ամենամեծ խաղատունը: Խաղատանը տեղադրված են 16 խաղասեղաններ և 85 խաղային ավտոմատներ:

2006 թվականի վերջին Հարկային Պետական ծառայությունը հայտարարում է “Հաստատագրված վճարների մասին”, “Լիցենզավորման մասին”, “Շահումով խաղերի և խաղատների մասին” ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու իր նպատակի մասին օնլայն խաղերն օրինականացնելու համար: Ասածն անմիջապես կատարվում է: Հայկական օրենսդրության վերջին փոփոխությունները իրավական ուժի մեջ են մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

Դրանք վերաբերում են օնլայն խաղերի կազմակերպմանը, դրանց լիցենզավորման կարգին, հարկմանը և այլն: Փոփոխությունների համաձայն, բոլոր օնլայն խաղերը նույնպես պետք է կազմակերպվեն խոշոր քաղաքների սահմաններից դուրս:

Ի սկզբանե “Շահումով խաղերի և խաղատների մասին” ՀՀ օրենքն ընդունելիս պատգամավորները ղեկավարվել են հայկական

մայրաքաղաքում խաղային բիզնեսի սահմանափակման և շրջանների զարգացման անհրաժեշտության սկզբունքով: Նրանց կարծիքով խաղային բիզնեսի “վերաբնակեցումը” պետք է որ ներգրավեր կապիտալներ, որոնք կնպաստեին Հայաստանյան շրջանների տնտեսական զարգացմանը: Սակայն կապիտալներն այդպես էլ չներգրավվեցին:

Խաղային կազմակերպությունների թիվը այդքան էլ մեծ չէ ինչպես կցանկանայն ոչ միայն գործարարներն այլև շահումով խաղերի և խաղատների մասնակիցները: Դրա համար էլ շատ ու շատ խաղասերներ խաղասրահներ այցելելու համար նախընտրում են մեկնել արտասահման: Այս ամենն արդյունք է ոչ լիարժեք ուսումնասիրությունների: Չնայած շատ հավանական է, որ մոտակա ժամանակներում գործող օրենսդրությունը կարող է էականորեն փոփոխվել, չէ որ հայկական օրենսդիրը միշտ պահում է ձեռքը զարկերակին և հետևում են հարևան երկրների խաղային բիզնեսի իրավական կարգավորմանը:

Եվգենի Կովտուն
2008